Գրանցվել

Գրանցվեք մասնագիտական կրթական ծրագրերում

Մայիսի 22-10 Սեպտեմբեր

 განათლებისა და
მეცნიერების სამინისტრო

პროფესიული
უნარების
სააგენტო

Գրանցման ցուցումներ՝ մասնագիտական կրթության ոլորտում ցանկություն հայտնող դիմորդների համար

- Գրանցվեք www.vet.emis.ge կայքում;
- Անցեք ավտորիզացիա և ընտրեք ցանկալի ծրագիրը կամ ծրագրերը կարմիր բլոկում, որը կոչվում է «Մասնագիտական կրթական ծրագրեր»:

Տեղեկություններ, որոնց պետք է ուշադրություն դարձնեք ծրագրերին գրանցվելիս.

- Կարող եք միաժամանակ գրանցվել առավելագույնը 3 մասնագիտական ծրագրում;
- Ծրագիր ընտրելիս կարգը նշանակություն չունի;
- Ծրագրի մասին տեղեկություններ կարելի եք գտնել նկարագրության մեջ:

Ծրագրին գրանցվելիս ուշադրություն դարձրեք նախորդող կրթական մակարդակի պահանջին: Ձեր կրթությունը պետք է համապատասխանի ընտրված ծրագրի ընդունման նախադրյալներին՝ հիմնական, այսինքն՝ 9-րդ դասարանի կամ ամբողջական ընդհանուր, այսինքն՝ 12-րդ դասարանի կրթություն: Որոշ ծրագրեր ունեն ընդունելության լրացուցիչ նախադրյալներ, որոնք նշված են ծրագրի նկարագրության մեջ: Օրինակ՝ առողջության վկայական, տարիք և այլն:

Գրանցվելիս ուշադրություն դարձրեք ծրագրի տեսակին և իրականացման վայրին:
Եթե ընտրել եք հիմնական, միջնակարգ, դուալ կամ օտար լեզվի ծրագիր, ապա մրցութային քննությունը կհանձնեք անմիջապես ծրագիրն իրականացնող ուսումնական հաստատությունում:

Այս ծրագրերում ընդունման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի եք գտնել գրանցման համակարգում կամ ստանալ անմիջապես ուսումնական հաստատությունից: Բարձրագույն մասնագիտական ծրագրերի դիմորդները կընտրվեն քննական ազգային կենտրոնի կողմից կազմակերպված թեստավորման հիման վրա, սակայն ծրագիրն իրականացնող ուսումնական հաստատությունը, կարող է կիրառել սեփական, լրացուցիչ մեխանիզմը նույնպես:

Եթե դուք ոչ վրացալեզու եք, ծրագրին գրանցվելիս կարող եք որպես թեստավորման/ընտրության լեզու ընտրել ադրբեջաներենը,

հայերենը կամ ռուսերենը, ինչը հնարավորություն կտա ընտրության ընթացակարգերը անցնել ձեր նախընտրած լեզվով: Գրանցվելուց հետո հնարավորություն կունենաք անցնել վրացերենի վեցամսյա դասընթաց:

Ո՞ր դեպքերում են քննական ազգային կենտրոնի կողմից ազատվում թեստավորումից:

- Եթե արտերկրում եք բնակվում, արտերկրում հայրենակցի կարգավիճակ ունեցող քաղաքացի եք
- Եթե Վրաստանի քաղաքացի եք, 2023 թվականին ավարտել եք դպրոցը մեկ այլ երկրում և տրված փաստաթուղթը ճանաչվել է Վրաստանի կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի կողմից
- Եթե Վրաստանի քաղաքացի ես կամ անձ, օրինական կերպով բնակվող Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում և Ցխինվալիի մարզում, չեզոք անձը հաստատող փաստաթղթով, 2023 թվականին ավարտել ես օկուպացված տարածքում հանրակրթական ուսումնական հաստատություն կամ ձեր կրթությունը ճանաչված է Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված կանոններին համապատասխան
- Եթե ապաստան փնտրող, փախստականի կամ մարդասիրականի կարգավիճակ ունեցող անձ եք

Նշում:

Հաջողությամբ գրանցման դեպքում ձեր նշած էլ. փոստին կստանաք գրանցման քարտ, իսկ բջջային հեռախոսահամարին՝ հատուկ կոդ, որը ձեզ անհրաժեշտ կլինի քննության քարտը և ավելի ուշ արդյունքները դիտելու համար:

Քննական քարտի վրա ուշադրություն դարձրեք քննության անցկացման վայրին, ամսաթվին և ժամին:

Գիտեցեք, որ կարող եք փոխել ձեր ընտրած ծրագիրը կամ ծրագրերը մինչև սեպտեմբերի 10-ը:

Կրթական հատուկ կարիքների դեպքում գրանցման ժամանակ մի մոռացեք նշել համապատասխան վանդակը՝ օգտվելու այլընտրանքային գրանցման մոտեցումից:

Ընտրության փուլն ավարտվելուց հետո, սկսվում է գրանցման փուլը, ձեր անձնական էջում կարտացոլվի սեփական վարկանիշը բոլոր ընտրված ծրագրերի համապատասխան՝ առանձին-առանձին: Մրցութային ընտրության հիման վրա առնվազն մեկ ծրագրի ընդունելություն իրավունք ստանալու դեպքում պետք է համապատասխան փաստաթղթեր

ներկայացնեք ուսումնական հաստատություն և կնքեք պայմանագիր:

Եթե պետք է ընտրեք մի քանի ծրագրերից, իմացեք, որ կարող եք դառնալ միայն մեկ ծրագրի ուսանող:
Եթե վարկանիշի համաձայն ընդունվող դիմորդը չներկայանա, ապա ուսումնական հաստատությունը թափուր տեղում կառաջարկի հաջորդ դիմորդին՝ ըստ վարկանիշի:

Գրանցման գործընթացն ավարտելուց հետո, եթե չընդունվեք ցանկալի ծրագրում, ունեք ևս մեկ հնարավորություն գրանցվելու՝ ձեր անձնական էջում կհայտնվի մնացած թափուր տեղերի մասին տեղեկատվություն, որոնք կլրացվեն հաստատությունների կողմից:
Նշված ժամանակահատվածում կարող եք վերընտրել ոչ ավելի, քան 3 ծրագիր:

Հետևե՛ք ձեր անձնական էջին և կառավարեք ժամկետները:

Մաղթու՛մ ենք հաջողություն!

VET.EMIS.GE